ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

18 նոյեմբերի 2025 թվական

5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 14.00

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 13 անդամ՝

Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Սամվել Հարոյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Արման Բաբաջանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Վահե Եսայան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,

Ալբերտ Մովսեսյան՝ Երևանի ավագանու անդամ,

Սամվել Հակոբյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Մարատ Թոխյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Լուսինե Բուղայան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,

Քրիստինե Վարդանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

-Հարցս վերաբերում է Արին-Բերդի փողոցին: Իմ տեղեկությամբ փողոցի հիմնանորոգման աշխատանքների մրցույթը կայացել է, բայց աշխատանքները չեն սկսել:

Ո՞րն է խնդիրը, որ մինչև այժմ աշխատանքները չեն սկսել:

Ինչպե՞ս է ստացվում, որ Վաղարշապատում ընտրություններից առաջ կարողանում են 10 օրում ասֆալտապատում անել, բայց Երևանի Արին-Բերդի փողոցը մեկ տարի է չի նորոգվում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Անդրանիկ Թևոսյանը:

Անդրանիկ Թևոսյան

-Կայացել է Արին-Բերդի փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծի մրցույթը, այժմ պետք է հայտարարվի շինարարական աշխատանքների մրցույթը:

Արշակ Սարգսյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. մի քանի ամիս առաջ՝ հանձնաժողովների նիստերից մեկի ժամանակ, քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանն ասաց, որ մոտակա օրերին Թումո կենտրոնի հետ կապված հանդիպում կկազմակերպվի: Մոտակա օրերը ե՞րբ են, արդեն երկու ամիս անցել է:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Ես առաջարկել էի, որ այդ աշխատանքային հանդիպումը լինի հենց հանձնաժողովի անդամների հետ, այնուհետև ես նպատակահարմար գտա քննարկել քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի հետ, որովհետև այն մթնոլորտը, որ կար ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ, ըստ իս, աշխատանքային չէր:

Ես այդ հարցը համապատասխան ոլորտի վարչության պետի հետ կքննարկեմ և կտրվի լուծում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հարոյան, խնդրեմ:

Սամվել Հարոյան

- Երևան քաղաքը վաղուց է շեղվել Թամանյանական սկզբունքներից, տեսանելի է և շատերն են այդ մասին բարձրաձայնում, այդ թվում՝ իմ շրջապատի մշակույթի շատ և շատ հայտնի գործիչներ:

Ես կխոսեմ Երևանի «Կասկադ» համալիրի մասին, որը Հայաստանի ամենատեսարժան վայրերից մեկն է և իր նշանակությամբ աշխարհում եզակիներից մեկն է համարվում: Թամանյանական սկզբունքներից բխելով, իբրև մայրաքաղաքի հյուսիս-հարավ ճառագայթի կարևորագույն հատված՝ Կասկադը շեշտում է հայոց սուրբ լեռան՝ Արարատի քաղաքաշինական առանցքը և իր կերպարում ամբողջացնում է հայ հոգևոր մշակույթի ժառանգության տարրերով իմաստավորված արժեքները:

1971 թվականից ընթացող Կասկադի շինարությունն անավարտ մնաց 1988 թվականին: Աշխարհում բազմաթիվ օրինակներ կան, երբ տարբեր պատճառներով՝ ճարտարապետի մահվանից հետո կամ տասնամյակներ անց, նույնիսկ դարեր անց ավարտին է հասցվել տվյալ շինարարությունը: Այդպիսիններից են՝ Անտոնիո Գաուդիի 1880-ական թվականների նախագծով մինչև օրս շարունակվող «Սագրադա ֆամիլիա»-ն, Լուիզ Կանիի՝ 1970-ական թվականների նախագծերով կառուցված կառավարական շենքերը՝ Բանգլադեշում, Ռուզվելտի հուշահամալիրը՝ Ամերիկայում, Սուրբ Պետրոս եկեղեցին՝ Ֆրանսիայում և այլն: Կասկադը ևս կարծում ենք պետք է ավարտին հասցվի հեղինակ ճարտարապետների՝ Ջիմ Թորոսյանի, Սարգիս Գուրզադյանի և Ասլան Մխիթարյանի կողմից իրականացված և հաստատված նախագծի հիման վրա և իր տրամաբանական շարունակությամբ միավորվի հայոց պետականության կոթողին: Այս պահանջը բխում է հայ մարդու ազգային ինքնաճանաչողության և ազգային արժանապատվության թելադրանքից:

Հարցս հետևյալն է. ի՞նչ որոշման հիման վրա է այս կարևորագույն ճարտարապետական կառույցի հարցը տեղադրվել «Ակտիվ քաղաքացի» հարթակում, որտեղ գրանցվածները տեղյակ չեն Կասկադի պատմությունից: Ինչու՞ են արհամարհվել համամահեղինակ Ասլան Մխիթարյանի նոր նախագծերը, ի՞նչ կազմակերպություն է շահել և ի՞նչ հիմումքներով է իրականացնելու շինարարությունը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հարոյան, սկսենք 2007 թվականից, երբ «Գաֆէսճեան» հիմնադրամը առաջարկել է իրականացնել «Կասկադ» համալիրի վերջնահատվածի կառուցման աշխատանքները: Այսինքն այն հատվածի կառուցման աշխատանքները, որոնք այժմ Երևանի քաղաքապետարանը նախաձեռնել է, որպեսզի իրականացվեն:

2007 թվականին տեղի է ունեցել ճարտարապետական միջազգային մրցույթ, որին մասնակցել են տարատեսակ ընկերություններ: Նրանց ճարտարապետական առաջարկները քննարկելուց հետո, որևէ մեկը չի ընտրվել, այլ ընտրվել է նյույորքյան ճարտարապետական մի գրասենյակի շատ հետաքրքիր առաջարկ:

Մի շատ կարևոր հանգամանք նշեմ, պարոն Հարոյան, որ «Կասկադ» համալիրի հեղինակը՝ Ջիմ Թորոսյանն անձամբ ընդունել է, որ այդ հատվածում կարող է իրենց իսկ առաջարկած նախագծից տարբերվող նախագիծ իրականացվել:

Այսինքն՝ 2007 թվականին նախագծի հեղինակն իր դրական եզրակացությունը տվել է այդ ճանապարհով շարժվելուն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կար նյույորքյան ճարտարապետական գրասենյակի առաջարկը: Այնուհետև, տեղի է ունեցել միջազգային ֆինանսական տնտեսական ճգնաժամ, նախագիծը չի իրականացվել: Այսինքն՝ հիմքերը ստեղծվել են և այդ կետում կանգ առել, մինչև 2024 թվականը:

Երբ ակտիվացան այս խոսակցությունները, ես անձամբ հանդիպել եմ նյույորքյան գրասենյակի ճարտարապետի հետ և դրան զուգահեռ Երևանի քաղաքապետարանում մենք քննարկում էինքՆորագյուղ թաղամասի վերակառուցման ծրագիրը, որի ժամանակ Երևանում էր ֆրանսիական «Wilmotte & Associés» ընկերության հիմնադիր, հայտնի ճարտարապետ Ժան Միշել Վիլմոտը: Պարոն Վիլմոտն, իր նախաձեռնությամբ, իրականացրեց նաև «Կասկադ» համալիրի վերջնահատվածի էսքիզային առաջարկ:

Քաղաքապետարանի ճարտարապետական, քաղաքաշինական խորհուրդը ընդլայնված կազմով՝ ավել ճարտարապետներ հրավիրելով, քննարկել է «Կասկադ» համալիրի տարբեր առաջարկներ, որոնք եղել են նախկինում, այդ թվում՝ նյույորքյան առաջարկը և ֆրանսիացի ճարտարապետի առաջարկը: Քննարկմանը մասնակցել է նաև ճարտարապետ Ասլան Մխիթարյանը, սակայն ոչ մի հանգուցալուծման չեն եկել և առաջարկվել է որոշակի ֆիլտրված տրամաբանությամբ դնել քվեարկության, որպեսզի մարդիկ իրենք որոշեն, թե որ ճարտարապետական առաջարկը պետք է լինի Կասկադում:

Այդ առաջարկի հիման վրա ֆիլտրվել է 2 նախագիծ, տարբեր պատճառներով մյուս նախագծերը չեն ներգրավվել: Ամեն դեպքում, ինչ-որ մի տրամաբանությամբ, պետք է ավելի լայն մասսաները ներգրավված լինեին գործընթացին:

Ուզում եմ կրկին հատուկ շեշտել՝ Ջիմ Թորոսյանը 2007 թվականին դրական արձագանք է տվել փոփոխությանը: Ընդհանուր առմամբ ճարտարապետները համաձայն են, որ Ձեր նշած՝ տրամաբանության շարունակությամբ ընթանալը միանշանակ լուծման ճանապարհը չէ:

Այս երկար գործընթացով նախագիծը դրվել է քվեարկության «Ակտիվ քաղաքացի» հարթակում, որոշվել է, որ այդ ֆրանսիական նախագիծն է իրականացվելու: Այդ նախագիծը, որպես էսքիզային առաջարկի հիմք, դրվել է կառուցման մրցույթի: Կառուցման մրցույթի հիմքում այն է, որ կենտրոնական հատվածում այն ինչ պետք է կառուցվի, դա ամբողջապես հանձնվելու է քաղաքին և դրա ծախսը հատուցելու նպատակով տրվելու է հնարավորություն հարակից տարածքում կառուցելու բազմաֆունկցիոնալ համալիր:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

-Պարոն Ավինյան, ցանկանում եմ անդրադառնալ 2 հասցեի՝ Դեմիրճյան փողոցի հ.17/4 և Գրիգոր Հարությունյան փողոցի 8-րդ տանը, որոնք գտնվում են իրար հարևանությամբ: Ինչպես հասկանում եմ այստեղ համակեցության որոշակի խնդիրներ կան, անգամ կողմերից մեկը բազմիցս այս հարցով ոստիկանություն է դիմել: Այնտեղ կան միջանցքի սահմանազատման և արտապատվիրակման խնդիրներ: Նշված հարցի հետ կապված 2 հարևաններն ունեն լուրջ խնդիրներ: Եվ այստեղ անհրաժեշտ է, որպեսզի կարգավորող մարմնի կողմից համապատասխան ճշտումներ իրականացվի փաստաթղթերի պատկանելիության վերաբերյալ: Այդ առումով միջնորդում եմ, որ Ձեր միջամտությամբ այս հարցին շուրջ որոշակի հստակություն լինի:

Մյուս հարցս վերաբերում է Վարդավառի այգուն. կուզենայի իմանալ ի՞նչ փուլում է գտնվում դատական գործընթացը, ինչքա՞ն կարող է ձգվել այդ «էպոպեան»:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցի վերաբերյալ կխնդրեմ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար պարոն Պետոյանին ուսումնասիրել բնակիչների միջև առկա խնդիրները: Կազմակերպեք բնակիչների ընդունելություն՝ առանձին-առանձին և հարցի լուծման տարբերակ առաջարկեք:

Վարդավառի այգու հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը:

Արմինե Ստեփանյան

-Վարդավառի այգու հետ կապված քրեական գործ է հարուցվել: Քաղաքապետարանը չի զբաղվում այս հարցով, քանի որ դատախազությունն է հայց ներկայացրել: Իսկ եթե համայնքին վնաս է պատճառվել, ապա քաղհայց է ներկայացվում:

Տիգրան Ավինյան

-Այս մասով նշեմ, որ Վարդավառի այգին քաղաքապետարանի պայմանագրով, երևի ամենաերկար ժամկետով վարձակալության տրված այգին է: Այս պարագայում մենք սպասում ենք դատախազությունում գտնվող գործի արդյունքներին, բայց կդժվարանամ նշել ժամկետներ: Օրինակ՝ կոնսերվատորիայի հարակից այգում, որտեղ շատ խոցելի տեղեր կային, պրոցեսը նվազագույնը 2 տարի տևեց մինչև վերադարձրեցինք համայնքին:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Պարոն քաղաքապետ, առաջին հարցը վերաբերում է ճանապարհային գծանշումներին:

Հասկանալի պատճառով՝ երթևեկության կանոնների և գծանշումների փոփոխության հետ կապված Երևան քաղաքում կատարում են նոր գծանշումներ: Հաճախ նոր

գծանշումները ժամանակի ընթացքում մաքրվում են և խառնվում են հին գծանշումների հետ և երթևեկության մասնակիցների համար ստեղծվում է խառնաշփոթ, որը կարող է բերել երթևեկության կանոնների խախտումների և տուգանքների:

Ուզում եմ հասկանալ ի՞նչ լուծումներ կարող ենք առաջարկել, որպեսզի հին գծանշումներն ամբողջովին անտեսանելի դառնան:

Երկրորդ հարցը վերաբերում է դիտահորերին:

Երևան համայնքում անհարթություններ ունեցող դիտահորերի հարցը կարգավորվել է: Այդ դիտահորերի կափարիչներն անհատների ջանքերով բարձրացվում են, որպեսզի ասֆալտի նկատմամբ նույն բարձրության վրա լինեն և խնդիրներ չառաջանան:

Ուզում եմ հասկանալ Երևանի քաղաքապետարանի կամ համապատասխան պատկան մարմնի կողմից ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այդ հարցը կարգավորելու ուղղությամբ:

Տիգրան Ավինյան

-Դիտահորերի մասով ունենք խնդիր: Շատ դեպքերում հարցը չի գտնվում քաղաքապետարանի ենթակայության տակ, բայց Ձեր կողմից մատնանշած մասնավոր նախաձեռնությունը մեզ հետ համագործակցությամբ է արվել:

Գծանշումների վերաբերյալ հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Երևան քաղաքում էմալային տիպի գծանշումներ իրականացված փողոցներում է հիմնականում իրականացվում երթևեկության կազմակերպման փոփոխություններ: Փոփոխությունների արդյունքում ասֆալտի շերտը քերման եղանակով չի մաքրվում, այլ իրականացվում է սև գծանշումներ՝ հինը ծածկելու համար: Ժամանակ առ ժամանակ սպիտակ նախկին գծանշումները տեսանելի են լինում և խնդիրը տեսանելի չլինելու համար որպես այլ լուծում կառաջարկեմ պարբերաբար սևացնել տվյալ հատվածները: Հակառակ պարագայում ասֆալտը կվնասվի:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Արսեն Կարոյան

-Դիտահորերի հետ կապված ցանկանում եմ փոքր հստակեցում անել. քանի որ դրանք պետական գույք են հանդիսանում և սպասարկվում են «Վեոլիա ջուր» ընկերության կողմից, այնուամենայնիվ, տարբեր հասցեների վերաբերյալ ահազանգերն ուղարկվում են «Վեոլիա ջուր» ընկերություն: Փոխվում են ոչ միայն կափարիչները, այլև հիմնովին փոխվում է բետոնապատ ծածկը: Քննարկում է տեղի ունեցել «Վեոլիա ջուր» ընկերության հետ, որպեսզի 2026 թվականին ֆինանսական միջոցներն ընկերությունն ավելացնի՝ այդ բեռն ավելի մեղմացնելու համար:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության անդամ Վահե Եսայան, խնդրեմ:

Վահե Եսայան

-Պարոն Ավինյան, Երևանի Գրիգոր Բաղյանի անվան հ.141 հիմնական դպրոցում խնդիր ունենք՝ տևական ժամանակ է նշված դպրոցում ջեռուցում չկա:

Ինչու՞ այդ հարցը չի կարգավորվում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

Մարգարիտ Խաչատրյան

- Պարոն քաղաքապետ, խնդրի մասին տեղյակ ենք: Համապատասխան գրություններ է ներկայացվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Իմ տեղեկությամբ հարցը կքննարկվի ուրբաթ օրը կայանալիք նիստում:

Այսօր այցելել ենք դպրոց, առաջարկել ենք կրճատ դասաժամերով հեռավար ուսուցում, ծնողները համաձայնվել են կրճատ դասաժամերով կազմակերպել ուսուցումը և երեխաներին ուղարկել են տուն:

Հուսով եմ ուրբաթ օրը գումարի հատկացման վերաբերյալ կլինի պատասխան:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ Երևանի ավագանու անդամ Ալբերտ Մովսեսյան, խնդրեմ:

Ալբերտ Մովսեսյան

-Հարցը վերաբերում է «Վարդաշեն» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներ տանող ճանապարհին: Տվյալ ճանապարհը գտնվում է անբարեկարգ վիճակում: Նշված հարցով ինձ դիմել են ոչ միայն դատապարտյալների հարազատները, այլ նաև քրեակատարողական հիմնարկների աշխատակիցները:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը:

Հակոբ Բալայան

-Ճանապարհն իսկապես գտնվում է շատ վատ վիճակում: Նախատեսել ենք վարչական շրջանի փոսալցման ծրագրի շրջանակներում 2026 թվականին իրականացնել տվյալ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյան, խնդրեմ:

Սամվել Հակոբյան

-Հարցը վերաբերում է գծանշումներին և կարմիր գծերին:

Կենտրոն վարչական շրջանի շատ հատվածներում կայանատեղին ավարտվում է այնտեղ, որտեղ սեկցիայի աջ հատվածում հոծ գիծ է, այսինքն հնարավորություն չկա

մեջտեղից վերադասավորվել դեպի աջ շարք: Փաստացի ստացվում է, որ քաղաքացիները կարմիր գծերի պատճառով խախտումներ են կատարում (օրինակ՝ Սայաթ-Նովայի պողոտա, Մ. Խորենացու փողոց):

Հասկանալի չէ, թե կարմիր գծերի վերաբերյալ խտրական վերաբերմունքը ինչպես է ձևավորվում, որ պետական նշանակության շենքերի հարակից տարածքներում պետական համակարգի աշխատողները կայանում են երկու շարքով, իսկ քաղաքացիները, ովքեր չեն հանդիսանում պետական ոլորտի աշխատակիցներ, անմիջապես տուգանվում են: Իմ պատկերացմամբ դա խտրական վերաբերմունք է:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հակոբյան, վերջին երկու տարվա ընթացքում շատ ծառայություններ դիմել են մեզ՝ կարմիր գծերի մասով տուգանվելու պատճառով, այսինքն խոսքը վերաբերում է այն պետական ծառայությունների ներկայացուցիչներին, որոնք կայանել են կարմիր գծերում և չեն վճարել: Որևէ խտրական վերաբերմունք որևէ մեկի նկատմամբ չկա:

Պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Պետական շենք-շինությունների դիմացի հատվածում վճարովի ավտոկայանատեղի կազմակերպված չէ, քանի որ դա օրենսդրական պահանջ է: Կրթական, մշակութային, պետական հաստատությունների հարակից հատվածներում վճարովի կայանատեղեր կազմակերպելու հնարավորություն չկա, քանի որ դա օրենսդրական սահմանափակում է:

Ինչ վերաբերում է գծանշումների հետ կապված հարցին, որ վճարովի ավտոկայանատեղի գծանշումները մոտ են մեկ տիպի գծանշումներին, այդ հարցի վերաբերյալ կարող ենք առանձին զրուցել:

Վստահեցնում եմ Ձեզ, որ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան գծանշումներ է արվել և եթե մոտ է, ապա տրանսպորտային միջոցը պետք է երթևեկի տվյալ շարքով, այլ ոչ թե այլ շարք վերադասավորվի, քանի որ համապատասխան գծանշմամբ այլ շարք վերադասավորվել չի թույլատրվում: Այլ հակասություններ եթե գիտեք, ապա պատրաստ եմ աշխատանքային կարգով քննարկել և դիտարկել:

Սամվել Հակոբյան

-Երկրորդ հարցը.

Երևանի քաղաքապետարանի դիմացի հատվածում՝ երկրորդ երթևեկելի գոտին նախատեսված էր ավտոբուսների համար:

Ցանկանում եմ իմանալ ո՞ր պաշտոնյան, կամ ո՞ր բաժինն է որևէ վերլուծության, հետազոտության արդյունքում մտածել, որ ավտոբուսը պետք է երթևեկի երեք երթևեկելի շարք ունեցող փողոցի երկրորդ երթևեկելի գոտում և կանգառ կատարելու համար ամեն անգամ վերադասավորվի աջ շարք:

Պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Ավտոբուսների համար առանձնացված երկրորդ երթևեկելի գոտին կիրառելն ուներ տրամաբանություն և այդ նախագիծը տրվել էր Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի հետ համագործակցության շրջանակներում: Տրամաբանությունը կայանում էր նրանում, որ առաջնահերթությունը երթևեկության մասնակիցների նկատմամբ տրվում է բացառապես հանրային տրանսպորտին:

Ինչու՞ երկրորդ երթևեկելի գոտի, որովհետև Մ.Խորենացու փողոցից աջ շրջադարձ կատարելիս ավտոբուսն ունենում է անհարմարություն միանգամից առաջին երթևեկելի գոտի մուտք գործելու համար, իսկ երկրորդ երթևեկելի գոտում ավտոբուսի գծի առկայությունն ապահովում էր հասարակական տրանսպորտի անխոչընդոտ շրջադարձը դեպի Իտալիայի փողոց:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Մարատ Թոխյան, խնդրեմ:

Մարատ Թոխյան

-Հարցս վերաբերում է արգելափակված բակային տարածքներին, ինչը չունի որևէ իրավական կարգավորում:

Ես հասկանում եմ, որ նախկինում երեխաները խաղալու տարածք չունեին և խաղում էին մուտքերի դիմաց, որը շատ ռիսկային էր: Սակայն վերջին տարիներին ընթանում են բակային տարածքների բարեկարգման լայնածավալ աշխատանքներ, կառուցվում են ֆուտբոլի, բասկետբոլի դաշտեր, տարբեր խաղահրապարակներ և կարծում եմ, որ այլևս չկա անհրաժեշտություն բակերն արգելափակոցներով փակելու: Դրանք լուրջ խոչընդոտ են ստեղծում թե՛ փրկարար ծառայության, թե՛ շտապբուժօգնության աշխատակիցների գործունեության համար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Թոխյան, իրականում այդ առումով մեր սկզբունքը հետևյալն է. վերջին երեք տարվա ընթացքում այդ տեսակ արգելափակված բակերի ամենամասշտաբային բացազատումն է տեղի ունեցել: Եվ տեղի է ունեցել մի կարևոր սկզբունքով՝ եթե առկա է խաղահրապարակի, ֆուտբոլի դաշտի, կանաչապատման ծրագիր, այդ տարածքները բացազատվում են: Դրանք ընդհանուր օգտագործման տարածքներն են՝ երեխաների ֆուտբոլի դաշտերը, հանգստի գոտիները, զրուցատաղավարները, կանաչ գոտին և երեխաների խաղահրապարակները:

Այս մոտեցումն, ընդհանուր առմամբ, երևանցիներն ընկալել են, ընդունել և շատ դիմադրության չենք հանդիպում: Քաղաքում դեռևս կան բազմաթիվ նմանատիպ բակեր, սակայն փուլ առ փուլ դրանք ազատվում են: Միայն այս տարի 130 բակի բարեկարգման

աշխատանքներ են իրականացվել, նախորդ տարի ևս նույն քանակի բակեր են բարեկարգվել:

Մարատ Թոխյան

-Հաջորդ հարցս այս հարցի շարունակությունն է. քաղաքում լայնամասշտաբ են արգելափակոցներով փակված տարածքները: Բակային տարածքը հասարակական տարածք է և ինչու՞ պետք է այդ բակի բնակիչը կարողանա օգտվել, իսկ այլ բնակիչ՝ ոչ:

Բացի այդ աշխատանքային ժամերին այդ արգելափակոցներով փակված բակային տարածքները հիմնականում կիսադատարկ են և մեքենաները կայանում են փողոցում: Մեքենաների հոսքը կարգավորելու գործընթացի շրջանակներում, կարելի է այդ արգելափակոցներն ընդհանրապես հանել, որպեսզի մեքենաները կարողանան կայանել բակերում:

Տիգրան Ավինյան

-«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծով այս բոլոր հարցերը ստանալու են իրենց պատասխանները, բայց հարցի վերաբերյալ ես ունեմ իմ մոտեցումը:

Բազմաթիվ քննարկումներից հետո մենք եկել ենք այն եզրահանգման, որ եթե որոշ տեղերից հանենք այդ արգելափակոցները, մասնավորապես Կենտրոն վարչական շրջանում, այն բնակիչները ովքեր ապրում են այդտեղ, մեծ հավանականությամբ իրենց բակ չեն կարողանալու մտնել:

Երբ խոսում ենք երթևեկության կարգավորման մասին, առաջինը պետք է հիշենք, որ երթևեկության մասնակիցների քանակը գնալով աճում է և միակ բանը, որ կարող է հիմնովին բարելավել երթևեկությունը, դա հենց մարդատար ավտոմեքենաների շարժի որոշակի սահմանափակումներն են: Շատ դեպքերում մենք վստահորեն այստեղ քննարկելու ենք նախագծեր, որ ոչ միայն բակ պետք է մտնեն այդտեղ գրանցված և ապրող մարդկանց մեքենաները, այլ առհասարակ որոշ փողոցներ՝ որոշակի ժամերի, կարող են մտնել միայն հասարակական տրանսպորտը և այդտեղ բնակվող քաղաքացիները:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյան, խնդրեմ:

Արամ Թորոսյան

- Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է շինթույլտվություն «Կամերտուն» բազմաֆունկցիոնալ համալիրի նախագծին, այն գտնվում է Հրազդանի կիրճի մյուս հատվածում, որի պատճառով փակվում է տեսադաշտը դեպի Փարաջանովի թանգարան, Ամերիկյան համալսարանի ուսանողական հատված:

«Կամերտուն» ընկերությունը նաև վերանորոգում է Մ. Մաշտոցի պողոտայի և Սբ. Գրիգոր Լուսավորչի փողոցի հատման մասում գտնվող գետնանցումը:

Ցանկանում եմ իմանալ ի՞նչ աշխատանքներ են կատարվում «Կամերտուն» ընկերության կողմից:

Տիգրան Ավինյան

-Հրազդանի կիրճում իրականացրած հետազոտության արդյունքներով արձանագրված սահմաններով կատարվել է ֆլորայի, ֆաունայի և պատմամշակութային հուշարձանների գույքագրում, հստակ սահմանագծվել է Հրազդանի կիրճը:

Վստահեցնում եմ Ձեզ, որ Հրազդանի կիրճի այդ հատվածներում սեփականության իրավունքի տրամաբանությամբ այլևս որևէ շինթույլտվություն չի տրվելու: Շատ կառույցներ հնարավորության դեպքում կքանդվի:

Ձեր կողմից մատնանշած հարցի կապակցությամբ կարող եմ ասել, որ դա եղել է Քաղաքաշինական խորհրդի վեց քննարկման արդյունք: Հաշվի առնելով, որ դրանից առաջ եղել է նաև ՀՀ կառավարության որոշում, ապա այն վերջին նախագիծն է, որն այդ հատվածում տրվել է: Ինձ համար տարօրինակ է, որ այդ օրինակը Դուք մատնանշում եք, բայց դրան հարակից «Փարաջանով Քլաբ Հաուզ» բազմահարկ համալիրը չեք նկատում: Ընդհանուր առմամբ Ձեզ հետ համակարծիք եմ և ցանկանում եմ վստահ լինեք, որ հատկապես ձորի հատվածին խիստ ենք վերաբերվում և շատ նախագծեր մեր կողմից մերժվել են:

Պարզաբանումներ կներկայացնի նաև Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

Պետրոս Պետոյան

-Պարոն Թորոսյան, Մ. Մաշտոցի պողոտայի և Սբ. Գրիգոր Լուսավորչի փողոցի հատման մասում գտնվող գետնանցումը բարեկարգվում է: «Երքաղլույս» ՓԲ ընկերության կողմից անցկացվել է հակավանդալային լույսեր, դրանից հետո իրականացրել ենք պատերի ավազաշթային լվացում: Այժմ «Կամերտուն» ընկերության կողմից կատարվում է մուտքերի, բազալտային քարերի, բետոնային շերտի ընդհանուր վերանորոգում, ինչպես նաև իրականացվում է միջանկյալ հատվածի փակման աշխատանքներ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Հարցս վերաբերում է Մանանդյան փողոցի հ.15 շենքի հ.12 բնակարանին: Նշված բնակարանի քաղաքացին զոհվածի այրի է, նա մեկ ամիս առաջ դիմել է Երևանի քաղաքապետարան՝ հանրակացարանային բնակարանը սեփականաշնորհելու համար: Քաղաքացուն գրավոր պատասխան տրամադրելու փոխարեն՝ հրավիրել են վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ և տվել են անորոշ պատասխան: Մասնավորապես՝ ասել են, որ ոչ թե 10 կամ ավելի տարի, այլ 20 տարի պետք է բնակվի այդ բնակարանում: Քաղաքացին լուրջ կասկածներ ունի, որ այս գործընթացը կարող է խոչընդոտվել ինչ-ինչ գործարքներից կամ շահերից պայմանավորված:

Խնդրում եմ հանձնարարել օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականաշնորհելու Մանանդյան փողոցի հ.15 շենքի հ.12 բնակարանը:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, երբևէ այս հարցով ինձ չեն դիմել:

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Տիգրան Գաբրիելյանին խնդրում եմ ընդունել քաղաքացուն:

Սուսաննա Մելիքյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Նոր Նորքի 5-րդ զանգվածի Մառի փողոցի 6-րդ նրբանցքի հ. 90 բնակարանի թոշակառու բնակչուհու խնդրին: Բնակչուհին ապրում է ծանր նյութական պայմաններում:

Ինչպե՞ս է պատահում, որ նման մարդիկ չեն ընդգրկվում սոցիալական աջակցության ծրագրերում և չեն օգտվում հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցություններից: Քաղաքացին մեկ տասնյակ տարի չի օգտվել ո՛չ պետական սոցիալական ծրագրերից, ո՛չ հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցություններից:

Արդյոք կա մեկ տարվա կտրվածքով ցանկ կամ ուսումնասիրության արդյունք կարիքավոր քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, այս հարցերը հիմնականում պարտադիր օրենսդրական պահանջ են և հանդիսանում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան սոցիալական աջակցության կենտրոնի գործառույթները: Երևանի քաղաքապետարանի կողմից հիմնականում իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերն ընդունված են Երևանի ավագանու կամ Երևանի քաղաքապետի կողմից, որոնք կամավոր են և հստակ:

Առաջարկում եմ տվյալ անձի կոնտակտային տվյալները փոխանցել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի տեղակալին: Քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը կամ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմն ինչ-որ կերպ կօգնեն քաղաքացուն:

Պարզաբանումներ կներկայացնի նաև Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Մարատ Սևոյանը:

Մարատ Սևոյան

-Ունենք սոցիալական աջակցության տարբեր ծրագրեր, փոխանցեք քաղաքացու տվյալները և կաջակցենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության անդամ Լուսինե Բուղայան, խնդրեմ:

Լուսինե Բուղայան

-Կենտրոն վարչական շրջանի մի շարք զբոսայգիներում ինտեսիվ կերպով նստարաններ են փոխվում, ինչը մեր քաղաքացիների մոտ դժգոհություն է առաջացրել: Ցանկանում եմ իմանալ ի՞նչն է պատճառը, որ հին նստարանները չեն վերանորոգվում, այլ փոխարինվում են նորերով: Ասեմ ավելին, կա մասնագիտական կարծիք՝ ըստ որի նշվում է, որ այդ նոր նստարաններն ընդհանուր քաղաքի գեղագիտական տեսքին չեն համապատասխանում: Արդյոք եղել է մասնագիտական խումբ և ինչի՞ հիման վրա է նման որոշում կայացվել:

Տիգրան Ավինյան

-Տիկին Բուղայան, հիմնականում, երբ նմանատիպ հարցերի շուրջ նոր գաղափար է առաջարկվում, Երևանի քաղաքապետարանի գեղարվեստական խորհուրդը նվազագույնը պետք է դրական դիրքորոշում ներկայացնի: Մասնավորապես, եթե հարցը վերաբերում է այգիների վերակառուցմանը, եթե ուղղակի ինչ-որ մասեր չեն ավելանում, նաև քաղաքաշինական խորհուրդն է ուսումնասիրում:

Հարցի վերաբերյալ հավելյալ պարզաբանումներ կներկայացնի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

Պետրոս Պետոյան

-Նշեմ, որ իրականում առաջինը հաշվի է առնվել միջազգային փորձը, երկրորդը՝ այդ նստարանների ամենուրեք տեղադրվելու խնդիրները, քանի որ նախկին նստարանները շատ դեպքերում գողանում էին և շուտ վնասվում, հատկապես, նստարանների թուջե հատվածները և երրորդը պետք է մի քիչ նորություն և մոդեռնիզացիա:

Նշեմ, նաև որ այս տարի 500-ից ավել թուջե ձուլվածքով նստարաններ են վերականգնվել:

Ինչ վերաբերում է այս նոր նստարաններին, դրանք փոշեներկված են և փայտն այնպիսի մշակում է անցել, որ ավելի երկար է ծառայելու և ամեն տարի վերանորոգելու կարիք չի լինելու:

Ավելացեմ նաև, որ մենք էլ շատ դիմումներ ենք ստանում, որ նստարանները շատ լավն են, հարմար և գեղեցիկ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Քրիստինե Վարդանյան, խնդրեմ:

Քրիստինե Վարդանյան

-Հարցս վերաբերում է սպորտի ոլորտին. մի քանի օր առաջ ինձ են դիմել սպորտի դպրոցներից մեկի աշակերտների ծնողները՝ շատ վրդովված, մասնավորապես մի դեպքի հետ կապված: Ավագանու անդամ Պեդրո Զարոկյանը շրջայցի շրջանակներում այցելել է մարզադպրոց, երեխաների ներկայությամբ հայհոյանք է հասցրել տնօրենին:

Արդյոք տեղյակ եք այդ միջադեպի մասին: Ինչպիսի՞ լուծումներ եք մտածում, որ այսպիսի դեպքերը չկրկնվեն:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ Արսեն Մակվեցյանը:

Արսեն Մակվեցյան

-Ես տեղյակ եմ միջադեպին, անձամբ ներկա եմ եղել այնտեղ, շատ տհաճ տեսարան էր, երբ ավագանու անդամը երեխաների ներկայությամբ բարձրաձայն վիճում էր տնօրենի հետ, բայց հայհոյանքներ չեն հնչել: Միջադեպից հետո զրուցել ենք Պեդրո Զարոկյանի հետ և նա խոստացավ, որ այլևս նման պահվածք չի դրսևորի:

Քրիստինե Վարդանյան

-Երկրորդ հարցը կրկին սպորտին է վերաբերում. առաջիկայում ի՞նչ միջոցառումներ են նախատեսված և ո՞ր սպորտաձևերից:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ Արսեն Մակվեցյանը:

Արսեն Մակվեցյան

-2026թ. սպորտային միջոցառումների ծրագրերն ավելի մեծ են, մարզաձևերը շատ են և յուրաքանչյուր տարի ավելանում են: Համեմատության համար ասեմ, որ վերջին 3 տարում ավելի շատ միջազգային մրցաշարեր է անցկացվել, քան նախորդ 30 տարում: Երևան քաղաքն այսօր դարձել է սպորտի «լոկոմոտիվը» բոլոր մարզաձևերի համար: Միայն այս տարի միջազգային մրցաշարարերին մասնակցել են արտերկրից ժամանած 3000-ից ավելի մարզիկ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Պարոն Ավինյան, հարցս վերաբերում է Երևան քաղաքի մայթերի կահավորմանը: Քաղաքում քայլելիս, ես նկատել եմ որ մայթերը հարթ չեն: Ցանկանում եմ իմանալ արդյոք զբաղվում եք այս հարցի լուծման ուղղությամբ կամ այս մասով կա՞ն հանձնարարականներ քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումներին:

Ցանկանում եմ նշել «Արմենիա Թի-վի» հեռուստաընկերության դիմացի հարակից հատվածը, որտեղ պետք է նախատեսված լինի հետիոտնային կանչովի լուսացույց, որպեսզի փողոցն անցնելը լինի անվտանգ: Այս խնդիրն ունենք ոչ միայն այդ հատվածում, այլ նաև ուրիշ փողոցներում: Այս մասով խնդրում եմ կահավորումներն ավելի արագ լինեն:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ավագյան, Երևան քաղաքի մայթերի կահավորման հարցի հետ կապված, ցանկանում եմ նշել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից մայթերի հիմնական աշխատանքը, իրականացնում ենք կոմպլեքս ձևով: Մասնավորապես, այժմ այս մասով մի փոքր քաղաքականությունը փոխվել է: Ինչպես օրինակ, Ամիրյան փողոցում, որտեղ իրականացրել ենք նաև մալուխների գետնի տակ անցկացումը, իրականացնում ենք ամբողջական մայթի վերակառուցում: Նույնն իրականացվում է Կոմիտասի պողոտայում: Այս մասով պարզաբանումներ կներկայացնի նաև Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանը:

Սուրեն Վարոսյան

-Պարոն Ավինյան, Կոմիտասի պողոտայի նախագիծն արդեն ունենք: Մյուս շաբաթ Ձեզ հետ կհամաձայնեցնենք և արդեն կներկայացնենք փորձաքննության:

Տիգրան Ավինյան

-«Արմենիա Թի-վի» հեռուստաընկերության դիմացի հարակից հատվածի հետիոտնային կանչովի լուսացույցի վերաբերյալ հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Պարոն քաղաքապետ, այս խնդրին ծանոթ ենք: Խնդիրը պայմանավորված է հետևյալով՝ Երևան քաղաքի 2025թ. զարգացման ծրագրով իրականացվելիք հետիոտնային կանչովի լուսացուցային կահավորման 13 հասցեում մրցույթում հաղթած կազմակերպության կողմից աշխատանքներ չեն կատարվել: Այս մասով համապատասխան տույժ-տուգանք է կիրառվել և պայմանագիրը խզվել է: Այդ հասցեներն ամրագրված են և նոր հայտարարված մրցույթով աշխատանքները կավարտվեն:

Տիգրան Ավինյան

-Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 3-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն